ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 78, հեռ՝ 060 469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

N 39/02-07-745 «26» 09 2022 թ.

«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-Ի (ՀՎՀՀ՝ 00873228) ՏՆՕՐԵՆ՝
պարոն Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց փ. 31, Արշակունյաց 119/112, Նոր Նորք, նոր թաղամաս, 1-ին նրբ, 58/2

Հարգելի պարոն Գասպարյան

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-ի և «ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ի միջև 2022թ.-ի փետրվարի 28-ին կնքված N ԵՄ-ԳՀԾՁԲ-22/17 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատուցել «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունները, սակայն Պայմանագրով նախատեսված ծառայությունները «ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից մատուցվել են թերի և ոչ պատշաճ կերպով:

Հաշվի առնելով, վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետով սահմանված պահանջները՝ «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-ն 2022թ. սեպտեմբերի 26-ից միակողմանիորեն ամբողջությամբ լուծել է N ԵՄ-ԳՀԾՁԲ-22/17 ծածկագրով գնման պայմանագիրը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում եմ մինչև ս.թ. հոկտեմբերի 4-ը ներառյալ ապահովել պայմանագրի կատարման ապահովման գումարի՝ 259,719.00 (երկու հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր տասնինը) ՀՀ դրամի չափով, և որակավորման ապահովման գումարի՝

389,578.50 (երեք հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր յոթանասունութ ամբողջ հինգ տասնորդական) ՀՀ դրամի չափով վճարների գանձումը:

Վերոնշյալի վերաբերյալ «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-ն դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ին:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ **Բ. ՍԵԴՐԱԿՅԱՆ**